

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՍՄԻԿ ՍՊԱՐՏԱԿԻ ՂԱԶՈՅԱՆ

ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

(ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի
տերմինների նյութի հիման վրա)

Ժ.02.07 - «Ռոմանագերմանական լեզուներ»

մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Կնյազյան Աննա Տարիելի

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Թովմասյան Հրանուշ Ժորայի
Բ.Գ.Թ., դոցենտ Դալայան Մանանա Գուրգենի

Առաջատար
կազմակերպություն՝ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022 թվականի սեպտեմբերի 14-ին՝ ժամը 11-ին ՀՀ ԲՈԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի հունիսի 30-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
Բ.Գ.Պ., պրոֆեսոր՝



Գայանե Մուրադյան

Ժամանակակից աշխարհում, որտեղ ի հայտ են գալիս նորարարություններ ու նոր նվաճումներ, փոխաբերականացման արդյունքում ստեղծված տերմինների կիրառության անհրաժեշտությունը դառնում է անխուսափելի: Բացառություն չեն ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտները: Այսպիսով, անհրաժեշտ են կոնկրետ լեզվաբանական կառույցներ, որոնց միջոցով հնարավոր է բացահայտել ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում տերմին դարձած միավորները:

Մույն ատենախոսության մեջ որպես հետազոտության **առարկա** քննության են առնվում տեխնիկական տերմինները (ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի), որոնք ստեղծվել են համագործածական շերտի բառերի փոխաբերականացման արդյունքում: Աշխատանքում դիտարկվել է մոտ 2000 տերմին, որոնց զգալի մասը հանգամանակից ուսումնասիրության է ենթարկվել: **Նյութի** ընտրությունը կատարելիս հաշվի են առնվել այն տերմինները, որոնք համապատասխանում են մեր հետազոտության մեջ արծարծվող հիմնախնդիրներին:

Հետազոտության հիմնական **նպատակն** է քննել փոխաբերականացումը՝ որպես տեխնիկական տերմինների ստեղծման աղբյուր: Հետազոտության ընդհանուր նպատակով պայմանավորված՝ առաջադրվել են հետևյալ **խնդիրները**.

1. լեզվաբանական ուղղվածություն ունեցող նմուշ-օրինակների հիման վրա ուսումնասիրել տեխնիկական տերմինների իմաստային առանձնահատկությունները,

2. կատարել ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինների իմաստային, խոսքիմասային և բառակազմական վերլուծություն,

3. վեր հանել ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինների խոսքիմասային պատկանելության և բառակազմական միջոցների դրսևորման տոկոսային հարաբերությունը՝ գործադրելով վիճակագրական մեթոդը,

4. բացահայտել անզլերենում փոխաբերականացման արդյունքում տերմին դարձած միավորների դերը ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կիրառվող տերմինների համալրման գործում:

Հետազոտության **արդիականությունը և կարևորությունը** պայմանավորված են այն հանգամանքով, որ չնայած մինչ այժմ կատարված բազում ուսումնասիրությունների, քննարկումների և վերլուծությունների առկայությանը, յուրաքանչյուր օր անհրաժեշտություն է առաջանում ստեղծել նոր տերմիններ՝ դրանք դարձնելով մեր առօրյա կյանքի մի մասը: **Արդիական** է այն փաստը, որ այսօր՝ գլոբալացման մեր դարաշրջանում, ավելի են կարևորվում տեխնիկական տերմինաբանության ուսումնասիրության հարցերը, երբ գիտությունը վերածվում է միջազգային,

համամարդկային, տնտեսական, սոցիալական, նյութական, հոգևոր և այլ ոլորտների զարգացումն ապահովող հզոր գործոնի: Տերմինաբանության ուսումնասիրությունն առավել հրատապ է դառնում համաշխարհային զլոբալ զարգացումների արդի փուլում, երբ աշխարհում ամեն վայրկյան ծագում և լեզուների մեջ են ներթափանցում տարաբնույթ տեխնիկական տերմիններ: Մեր օրերում կարելի է փաստել ոչ միայն գիտության, տեխնիկայի, արդյունաբերության գրեթե բոլոր ոլորտների թվայնացումը, այլև ժամանակակից տեխնիկայի՝ մարդու առօրյա կյանք ներթափանցելու արագ ընթացքը: Սա թույլ է տալիս խոսել ռադիո-էլեկտրոնիկայի ու հաշվողական տեխնիկայի տերմինաբանության ընդլայնման մասին, և գիտական նոր հասկացությունների ստեղծումն արժևորել որպես լեզվի բառապաշարի հարստացմանը նպաստող գործոն:

Ատենախոսության գիտական **նորույթը** պայմանավորված է լեզվական ընդգրկուն նյութի հիման վրա փոխաբերականացման միջոցով ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի տերմինների ուսումնասիրությամբ:

Նորույթ է՝

- փոխաբերականացման արդյունքում ձևավորված ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի տերմինների իմաստային վերլուծությունը և դասակարգումը՝ հիմնված աշխարհընկալման լեզվական պատկերի վրա,

- խոսքիմասային պատկանելության ու բառակազմական միջոցների վերհանումը, որոնք օգտագործվել են ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում տերմիններ կազմելիս,

- վիճակագրական մշակման մեթոդի կիրառմամբ փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինների քանակական և տոկոսային հարաբերությունների ներկայացումը՝ ելնելով խոսքիմասային պատկանելությունից ու բառակազմական միջոցների գործածումից:

Սույն աշխատանքի **տեսական նշանակությունը** պայմանավորված է տերմինաբանության, ինչպես նաև փոխաբերականացման վերաբերյալ տեսական պատկերացումները խորացնելու և համակարգելու կարևորությամբ:

Հետազոտության կիրառական արժեքը պայմանավորված է այն իրողությամբ, որ վերջինս կարող է հետաքրքրել և տեսական նյութ ծառայել լեզվի իմաստաբանության, բառագիտության, գործաբանության, ինչպես նաև տեխնիկական անգլերենի խնդիրներն ուսումնասիրողների համար: Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտների տերմինների իմաստաբանական առանձնահատկությունների քննությունը կարող է հիմք դառնալ տեխնիկական տերմինների բառարաններ կազմելիս, որտեղ մանրամասն անդրադարձ կարվի բացառապես փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինների:

Հետազոտության առարկայի առանձնահատկությունը, նպատակների ու խնդիրների բնույթը պահանջում են կիրառել տարատեսակ **մեթոդներ**: Ատենախոսական աշխատանքում արդյունքների ներկայացման համար հիմնականում կիրառվել են նկարագրական, գուգադրական և վերլուծության մեթոդներն իրենց հիմնական բաղադրիչներով (դիտարկում, ընդհանրացում, մեկնաբանում, դասակարգում): Օգտագործվել է նաև վիճակագրական մշակման մեթոդը:

Հետազոտության **մեթոդաբանական հիմքը** տերմինաբանության և փոխաբերականացման մասին տեսությունների ուսումնասիրություններն ու վերլուծություններն են: Այնպիսի լեզվաբանների, ինչպիսիք են Մ. Բլեքը, Ջ. Լակոֆֆը, Ն. Դ. Արությունովան, Շ. Բալլին, Ի. Վ. Արնոլդը, Մ. Ա. Բրայսոնը և Մ. Ն. Մյուլդերը, հետազոտություններն ու դրույթները լուսաբանում են փոխաբերականացման տեսական հիմքերը, ինչն էլ հնարավորություն է տալիս մեզ՝ քննության ենթարկելու ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կիրառվող տերմինները:

Հետազոտության նյութի փորձաքննությունը. ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են ութ գիտական հոդվածներում: Աշխատանքում կիրառվող մոտեցումները քննարկվել են Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի օտար լեզուների ամբիոնի նիստերում:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ենթագլուխներն ու ծանոթագրությունները, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ սահմանվում են հետազոտության օբյեկտը և առարկան, ներկայացվում ուսումնասիրության արդիականությունը և գիտական նորույթը, ձևակերպվում նպատակներն ու խնդիրները, նշվում մեթոդաբանական ու մեթոդական հիմքերը, աշխատանքի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակությունը: Տեղեկություն է տրվում ատենախոսության դրույթների փորձաքննության վերաբերյալ և հիմնավորվում աշխատանքի կառուցվածքը:

Առաջին գլուխը («Տերմինաբանական հետազոտությունները լեզվաբանության ժամանակակից հարացույցում») բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում («Տերմինի ուսումնասիրման տեսական հիմքերը») ուսումնասիրվում են տերմինաբանական տարաբնույթ հարցեր: Այսպես օրինակ՝ տերմինաբանության համակարգայնության հարցին առաջին անգամ անդրադարձել է Դ. Ս. Լոտտեն: Նա իր աշխատանքում ընդգծում է, որ տերմինաբանության համակարգայնությունը պահանջում է երեք պայմանների պահպանում, այն է՝ տերմինաբանական համակարգը պետք է հիմնվի հասկացությունների դասակարգման վրա, պետք է առանձնացնել տերմինների հատկանիշներն ու հասկացությունները՝ հիմնվելով դասակարգման համակարգերի վրա, և բառերը

պետք է արտահայտեն տերմինային հասկացության ընդհանրությունը այլ միավորների հետ: Կարող ենք նշել, որ մեր ուսումնասիրության ընթացքում կիրառվել է Դ. Ս. Լոտտեի առաջադրած պայմաններից առաջինը, այն է՝ տերմինաբանական համակարգը պետք է հիմնվի հասկացությունների դասակարգման վրա՝ հաշվի առնելով աշխարհընկալման լեզվական պատկերը:

Երկրորդ ենթագլխում («Տերմին և բառ հասկացությունների զուգադրական քննություն») դիտարկվում են «տերմին» ու «բառ» հասկացությունները՝ իրենց բնորոշ առանձնահատկություններով: Բառը լեզվի նվազագույն իմաստակիր միավորն է, որն ունի ինքնուրույն գործածություն և վերարտադրվում է խոսքի մեջ հաղորդակցական միավորներ կառուցելու համար²: Քանի որ տերմին են դառնում նյութական իմաստ ունեցող բառերը, ուստի շատ անմիջական է տերմինի և հասկացության կապը: Տերմինը համապատասխանում է իր նշանակած հասկացությանը: Հենց սրանով էլ պայմանավորված է այն իրողությունը, որ *տերմինի իմաստը գիտականորեն սահմանելի է*: Տերմինն իր մեջ պարունակում է *ճշգրտություն և հստակություն*: Գ. Ջահուկյանը և Ֆ. Խլղաթյանը գտնում են, որ տերմինները կիրառվում են ճշգրիտ հասկացություններ արտահայտելու համար³: Իսկ Է. Աղայանը կարծում է, որ ոչ ճշգրիտ հասկացությունը և, հետևաբար, դրա ոչ ճշգրիտ սահմանումը գիտական արժեքից կրկեր տերմինը և տերմինային իմաստը⁴: Այստեղից հետևում է, որ տերմինը նաև բնութագրվում է որպես ճշգրիտ սահմանելի հասկացություն⁵: Այսպիսով, *տերմինի իմաստը ոչ միայն գիտականորեն, այլև ճշգրտորեն սահմանելի է*: Ի մի բերելով վերն ասվածը՝ կարող ենք տերմինը սահմանել այսպես. այն որևէ բնագավառին պատկանող և այդ բնագավառին հատուկ, ճշգրտորեն սահմանելի գիտական հասկացություն նշանակող բառ կամ բառակապակցություն է:

Երրորդ ենթագլխում («Տեխնիկական տերմինների ստեղծման և զարգացման ընթացքը») նկարագրվում է տեխնիկական տերմինների առաջացման ու զարգացման ընթացքը: Տերմինաբանական միավորների առաջացումը լեզվում պատահական երևույթ չէ: Վերջինս պայմանավորված է արտալեզվական գործոններով, սովյալ դեպքում՝ որևէ երևույթի բացահայտմամբ, հասկացության կամ առարկայի

¹ Лотте Д. С. Основы построения научно-технической терминологии. Вопросы теории и методики. М.: Изд-во АН СССР, 1961.

² Խաչատրյան Լ. Մ. Լեզվաբանության ներածություն // Ուս ձեռնարկ. Ե., «Զանգակ-97» հրատ., 2008:

³ Ջահուկյան Գ. Բ., Խլղաթյան Ֆ. Հ. Հայոց լեզու: Ոճարանություն, Ե., «Լույս» հրատ., 1988:

⁴ Աղայան Է. Բ. Լեզվաբանության հիմունքներ // 4-րդ հրատ. Ե., ԵՊՀ հրատ., 1987:

⁵ Корумнов С. И., Самбурова Г. Г. Краткое методическое пособие по разработке и упорядочению научно-технической терминологии. М.: Наука, 1979.

ստեղծմամբ: Ոչ բոլոր տերմիններն են պահպանում իրենց սկզբնական իմաստային նշանակությունը, քանի որ գիտության զարգացման հետ մեկտեղ ճշգրտվում և փոփոխվում են անվանողականության հիմքում ընկած հասկացությունները, և համապատասխանաբար ճշգրտվում ու փոփոխվում են տերմինների իմաստային սահմանումները:

Երկրորդ գլուխը («Փոխաբերականացումը որպես լեզվական երևույթ») բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում («Փոխաբերությունը որպես փոխաբերականացման դրսևորման հիմնական միջոց») դիտարկվում է փոխաբերությունը՝ որպես փոխաբերականացման դրսևորման հիմնական միջոց: Մարդկային միտքն ի գործու չէ ընկալել իրողությունները, վերացական հասկացություններն ու գաղափարները՝ առանց համեմատելու կոնկրետ իրականության հետ: Այսպես ծնվում է փոխաբերությունը, որը ոչ այլ ինչ է, քան համեմատություն, երբ մարդկային գիտակցության մեջ վերացական հասկացությունը որոշակի առարկայի հետ կազմում է մեկ հարադրություն⁶: Այսպիսով, մարդու համադրման կարողության շնորհիվ է դրսևորվում փոխաբերականացման երևույթը: Գիտական լեզվում փոխաբերականացման արդյունքում ծնված հասկացությունը մասնագետի կողմից հետագայում ենթարկվում է ստուգման, ապա հաստատման կամ հերքման: Փոխաբերականացման արդյունքում ստեղծված տերմիններն անվանում են նոր երևույթ, օգնում ճանաչել այն՝ հանդիսանալով ճանաչողական գործունեության կազմակերպման եղանակ: Փոխաբերականացման հիման վրա ձևավորված տերմինները կազմում են խմբեր, ինչպիսին օրինակ՝ մարդաբանական, կենդանական աշխարհը, կենցաղային ու մտավոր ոլորտը ներկայացնող խմբերն են:

Երկրորդ ենթագլխում («Տեխնիկական տերմինների իմաստային առանձնահատկությունները») ուսումնասիրվում են տեխնիկական տերմինների իմաստային առանձնահատկությունները: Որպես տեխնիկական տերմին՝ հաճախ օգտագործվում է արդեն գոյություն ունեցող համագործածական բառը, որը տերմինների տվյալ համակարգում ստանում է որոշակի բովանդակություն, քանի որ այդ բառի՝ նախկինում ունեցած նշանակություններին ավելանում է ևս մեկ նոր նշանակություն: Նոր տերմինի կառուցման ելքային նյութ կարող է ծառայել համագործածական բառը կամ այլ տերմինաբանության որևէ համակարգում որպես տերմին օգտագործվող բառը: Այսպիսով, տերմինի նշանակության

⁶ Балли Ш. Французская стилистика // пер. с фр. К. А. Долинина под ред. Е. Г. Эткинда. 2-е изд. М.: Эдиториал УРСС, 2001.

⁷ Gentner D. Are scientific analogies metaphor? // Metaphor: Problems and perspectives. Brighton: Atlantic Highlands, 1982, pp. 106-132.

փոփոխության հնարավոր դեպքերը կարող են լինել չորս տեսակ՝ 1. տերմինի նշանակության դասակարգման փոփոխություն, 2. տերմինի նշանակության ճշգրտում և փոփոխում, 3. տերմինի նշանակության փոփոխություն՝ ըստ հասկացությունների համանմանության և 4. տերմինի նշանակության փոփոխություն՝ ըստ հասկացությունների հարակցությամբ:

Երրորդ գլուխը («Փոխաբերականացումը որպես տեխնիկական տերմինների ստեղծման հիմք») բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում («Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի տերմիններում փոխաբերականացման նախադրյալները») իմաստաբանական տեսանկյունից քննության են ենթարկվում ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ստեղծված տերմինները: Անկասկած, գոյություն ունի կապ տերմինի և համագործածական լեզվում առկա բառի միջև: Այդ կապն, անշուշտ, իմաստաբանական բնույթ է կրում, քանի որ փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինները ստեղծվել ու ստեղծվում են համագործածական լեզվում առկա բառիմաստի հիման վրա:

Գիտական լեզվում փոխաբերականացումն իմաստաբանական գործընթաց է, որը հիմնված է արտալեզվական միջավայրի երևույթների վրա, ինչպես նաև պայմանավորված է ներլեզվական հարաբերություններով, այն կապերով, որոնք գոյություն ունեն հենց լեզվի բառիմաստային համակարգում:

Փոխաբերականացման գործընթացն սկսվում է տերմինը համագործածական լեզվում առկա բառից տարանջատելուց, որին հաջորդում է համագործածական բառապաշարում համապատասխան բառ փնտրող մասնագետի մտավոր գործունեությունը: Բառը տերմինաբանական դաշտում կորցնում է իր համագործածական բառապաշարային նշանակությունը և ձեռք բերում համապատասխան գիտական հասկացություն: Փոխաբերականացման հիմքում ստեղծված տերմինները դառնում են տվյալ բնագավառի լիիրավ անդամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեզուն ազդում է մարդկային գործունեության տարբեր ոլորտների վրա (այդ թվում ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի) և հիմք ընդունելով Մ. Բրայսոնի⁹ ու Մ. Մյուլդերի¹⁰ տեսությունները՝ փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինները կարող ենք դասակարգել *մարդաբանական (անտրոպոլոգիական)* և *ոչ*

⁸ Лотте Д. С. Основы построения научно-технической терминологии. Вопросы теории и методики. М.: Изд-во АН СССР, 1961.

⁹ Bryson M. A. Nature, narrative, and the scientist-writer: Rachel Carson's and Loren Eiseley's critique of science, Technical Communication Quarterly, 12, 2003, pp. 369-387.

¹⁰ Mulder M. N. Perception of Anthropomorphic Expressions in Software Manuals. Journal of Technical Writing and Communication, vol. 26, issue 4, 1996, pp. 489-506.

մարդաբանական (ոչ անտրոպոլոգիական) խմբերի: Մարդաբանական խմբին են պատկանում փոխաբերականացման արդյունքում ձևավորված այն տերմինները, որոնք արտացոլում են մարդու սոցիալական գործունեության ֆիզիկական, բարոյական և մտավոր հատկությունները: Այդպիսիք են, օրինակ, *մասնագիտություններ ցույց տվող բառերը*: Այսպես օրինակ՝ *driver* բառի փոխաբերական տեղաշարժի հիմքում *drive* բայն է, որը համագործածական լեզվում արտահայտում է *վարել, շարժել, տանել* իմաստները: Հետևաբար *driver* տերմինն ունի *սարքավարիչ* իմաստը:

Translator բառային միավորի փոխաբերական անցման հիմքում *translate* բայն է, որը նշանակում է *թարգմանել*: Ինչպես *թարգմանիչն* է որևէ լեզվից գրավոր կամ բանավոր խոսքը փոխանցում մեկ այլ լեզու, այնպես էլ *փոխադրող ծրագիրն* է մեկ այլ որակյալ ծրագիր փոխադրում մեքենայական կոդի:

Երբեմն փոխաբերականացման հիմքում է երկու հասկացությունների շոշափելի գործառութային նմանությունն է: Այսպես օրինակ՝ *wizard* բառային միավորի տերմինային իմաստի հիմքում *հրաշագործ* բառն է, որը նշանակում է հրաշքներ գործող անձ: Վերջինս օժանդակ ծրագիր է, որն օգնում է ինչ-որ բան ստեղծելուն և հեշտացնում տվյալ օպերացիոն համակարգի աշխատանքը՝ կատարելով բարդ գործողություններ: Այս դեպքում կարող ենք ասել, որ փոխաբերական անցումը տեղի է ունենում գործառութային համանմանության արդյունքում:

Մարդաբանական խմբին են պատկանում նաև *մարմնի մասերի անվանումները* և *ազգակցական հարաբերակցություն ցույց տվող բառերը*:

Կազմախոսական բառերը փոխաբերականացման արդյունքում ստանում են նոր իմաստ: Վերջինս համարվում է տեխնիկական տերմինի առաջնային իմաստը և երբեմն նաև կապված չէ ուղիղ իմաստի հետ: Այստեղ տեղին է նշել Պ. Ռիքերի այն տեսակետը, որ, ինչպես մարմինն է փոխում իր դիրքը, այնպես էլ փոխաբերականացման արդյունքում կազմված բառերը «շրջում» են իրենց հիմնական իմաստը: Վերջիններս «մարմնավորում» են հասկացությունները՝ առարկային կամ երևույթին կերպարանք հաղորդելով¹¹: Այսպես օրինակ՝ *body* բառը համագործածական լեզվում արտահայտում է հետևյալ իմաստները. ա) մարմին (երկնային մարմին), բ) իրան, մարմին, գ) դիակ, դ) խսկց. մարդ, ե) հիմնականաբար գ) բուն, է) մարդկանց խումբ, ը) մեծամասնություն, թ) գորամաս իմաստները¹²: *Body* բառային միավորի դեպքում՝ փոխաբերական անցումը կատարվում է՝ հիմք ընդունելով վերջինիս՝

¹¹ Ricoeur P. The metaphorical process as cognition, imagination and feeling. // Critical Inquiry, vol. 5, №1: Special Issue on Metaphor. Aut., 1978, pp. 143-159. URL.: <http://www.jstor.org/stable/1342982> (accessed 05.10.2020)

¹² Ասմանգուլյան Հ. Ա., Հովհաննիսյան Մ. Ի. Անգլերեն-հայերեն բառարան. «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1984:

համագործածական լեզվում արտահայտած իմաստները, այն է՝ *մարմին, հիմնականապես, բուն*: Հաշվողական տեխնիկայի ոլորտում *body* տերմինը հանդես է գալիս *տեքստի* կամ *ծրագրի հիմնական մաս* իմաստային նշանակությամբ:

Հետաքրքիր է *brain* տերմինի կիրառությունը հաշվողական տեխնիկայի ոլորտում: Վերջինս ունի մեքենայի *ուղեղ* իմաստը ներքոհիշյալ օրինակում՝

*The computer brain is a microprocessor called the central processing unit (CPU). The CPU is a chip containing millions of tiny transistors.*¹³

40-ական թվականներին լույս է տեսնում Ջ. Բերկլիի աշխատությունը, որտեղ նա առաջին անգամ *brain* բառն օգտագործում է *giant (հսկա)* և *mechanical (մեխանիկական)* ածականների հետ՝ ստանալով *mechanical brains (մեխանիկական ուղեղ)* կամ *giant brains (հսկա ուղեղ)* բառակապակցությունները: Այդպես էր նա կոչում այն մեքենաները, որոնք մտածում և գործում են, ինչպես մարդու ուղեղը: Այս կերպ *brain* տերմինը ներմուծվում է հաշվողական տեխնիկայի ոլորտ¹⁴:

Փոխաբերական հիմքով են կազմվում նաև ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կիրառվող *ազգակցական հարաբերակցություն ցույց տվող բառերը*: *Orphan* բառային միավորի տերմինային իմաստը բխում է վերջինիս՝ աղբյուր տիրույթում արտահայտած իմաստներից, այն է՝ *ծնողագուրկ, անտերունչ, մենավոր*: *Orphan* տերմինը թարգմանաբար նշանակում է *որբուկ*: Վերջինս պարբերության առաջին տողն է, որը տպված է պունակի ներքևում, իսկ պարբերության մնացած մասը տպված է հաջորդ պունակի վերևում: Վերոնշյալից հետևում է, որ «որբուկը» անտեսված տող է և «տգեղացնում է էջը»:

Ոչ մարդաբանական խմբին են պատկանում փոխաբերականացման արդյունքում ձևավորված այն տերմինները, որոնք արտացոլում են մարդուն շրջապատող իրականությունը: Հիշյալ տերմինների ձևավորման մեջ փոխաբերականացումը ցույց է տալիս երկու տարբեր առարկաների արտաքին նմանության հարաբերակցությունը: Վերջիններս կարող են լինել *կենդանիների, կենցաղային իրերի, հագուստի, բույսերի և վերացական հասկացությունների անվանումներ*: Այսպես օրինակ՝ *mouse* բառը համագործածական լեզվում արտահայտում է *մուկ* իմաստը: Հաշվողական տեխնիկայի ոլորտում վերջինս փոքրիկ, ձեռքի ներմուծման սարք է, որը շարժվում է հարթ մակերեսի վրա, որպեսզի դեկավարի սլաքի դիրքը

¹³ <https://computer.howstuffworks.com/inside-computer1.htm> (accessed 15.06.2021)

¹⁴ Berkeley E. C. Giant brains or machines that think. Science Editions, Inc., New York, 1961, URL.:

https://monoskop.org/images/b/bc/Berkeley_Edmund_Callis_Giant_Brains_or_Machines_That_Think.k.pdf (accessed 15.06.2021)

էկրանին¹⁵: Հիշյալ բառի փոխաբերական տեղաշարժն իրականացվում է ֆիզիկական նմանության հիման վրա, այսինքն՝ առաջացել է մկան՝ կրծողի ձևի և չափի հետ նմանությունից, որի լարը հիշեցնում է վերջինիս պոչը: Հետևաբար, այս տերմինի իմաստաբանական ձևավորմանը նպաստել է արտաքին նմանության գուգորդումը, որի շնորհիվ վերջինս լայն կիրառություն ունի որպես համակարգչի մաս:

Bug տերմինն առաջին անգամ կիրառել է Թոմաս Էդիսոնը: Վերջինս մեքենայի մեջ նկատել էր սխալ կամ անսարքություն: Այս «սխալն» իրականում փայտոջիլ էր: Թակարդն ընկած միջատն իրականում խափանել էր համակարգչի աշխատանքը¹⁶: Այսպիսով, կարող ենք փաստել, որ փոխաբերական անցումը տեղի է ունենում՝ հիմք ընդունելով վերջինիս՝ աղբյուր տիրույթում արտահայտած *փայտոջիլ* իմաստը:

Worm բառը համագործածական լեզվում արտահայտում է *որդ*, *ճիճու* իմաստները: Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կիրառվելիս վերջինս նույնպես ունի *ճիճու* իմաստը, որը համարվում է վիրուսային ինքնավերարտադրվող ծրագիր: *Ճիճու* անվանումը բերված է 1970-ական թվականներին տպագրված Ջոն Բրունների գիտաֆանտաստիկ վեպից: Գիրքը նկարագրում է *երիզորդներ* անունով հայտնի ծրագրերը, որոնք տարածվում են ցանցի միջոցով՝ տվյալների ջնջման նպատակով¹⁷:

Snake տերմինը հիշյալ օրինակում արտահայտում է *սիւսուցիչ* իմաստը՝

Snakes are very tricky for a GPS unit because they can't be implanted and need the antenna(s) point towards the sky to work ¹⁸.

Snake տերմինի փոխաբերական անցման հիմքում արտաքին նմանության գուգորդումն է: *Snake* տերմինով են կազմված *snake waveguide (օձանման ալիքատար)*, *snake antenna (ճեղքավոր ալեհավաք)* բառակապակցությունները:

Cookie տերմինը ստեղծվել է ցանցային զննարկիչների ծրագրավորող Լու Սոնտուլիի կողմից: Վերջինիս փոխաբերական անցման հիմքում *magic cookie (կախարդական թխվածքարվիթ)* բառակապակցությունն է: Համաձայն մի վարկածի՝ այն «թխվածքարվիթ էր՝ ներկառուցված հաղորդագրությամբ»¹⁹ *Cookie* տերմին-

¹⁵ Գրիգորյան Խ. Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարան. «Անկյունաքար» հրատ., Երևան, 2003:

¹⁶ McFadden Christopher The Origin of the Term «Computer Bug». June 12, 2020, URL.: <https://interestingengineering.com/the-origin-of-the-term-computer-bug> (accessed 25.06.2020)

¹⁷ https://en.wikipedia.org/wiki/List_of_computer_term_etymologies (accessed 25.06.2020)

¹⁸ <https://telenax.com/product-details/snake/> (accessed 22.09.2021)

¹⁹ <https://www.inlife.co.uk/why-are-cookies-called-cookies/> (accessed 27.06.2020)

նային միավորը կիրառվում է Unix ծրագրավորողների կողմից²⁰:

Ոչ մարդաբանական խմբին է դասվում *tree* համագործածական բառը, որը փոխաբերական տեղաշարժի արդյունքում վերածվել է տերմինի: Հաշվողական տեխնիկայի ոլորտում կիրառվելիս *tree* տերմինը ցույց է տալիս, որ տվյալների յուրաքանչյուր միավոր ճյուղերով կապված է մի քանի այլ տվյալների հետ: Այսպիսով, հիշյալ տերմինային միավորի փոխաբերական անցումը տեղի է ունենում արտաքին նմանության գուգորդմամբ, որի շնորհիվ վերջինս դառնում է տեխնիկական տերմինի կարևոր բաղադրիչ:

Երկրորդ ենթագլխում («Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի տերմինների խոսքիմասային առանձնահատկությունները փոխաբերականացման տեսանկյունից») քննության են ենթարկվում ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ստեղծված տերմիններն ըստ խոսքիմասային պատկանելության: Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում կազմված տերմինները հիմնականում **հասարակ գոյականներ** են: Այսպես օրինակ՝ *spaghetti* հասարակ գոյականի կիրառության աղբյուր տիրույթը սննդամթերքին առնչվող տերմինաբանության ոլորտն է, իսկ թիրախ տիրույթը՝ ռադիոէլեկտրոնիկայի ոլորտը: Վերջինս հիշյալ ոլորտում կիրառվելիս ձեռք է բերում միանգամայն այլ իմաստային երանգավորում: *Spaghetti* տերմինային միավորն արտահայտում է *մեկուսիչ խողովակ* իմաստը, որն արտացոլված է ներքոհիշյալ օրինակում՝

Spaghetti tubing is mostly designed for the electronic industry. They are extruded in three different wall thicknesses: Standard (SW) Thinwall (TW) and Ultrathinwall (LW).²¹

Խոսքիմասային խմբի մեջ են մտնում նաև գործողություն ցույց տվող այն տերմինները, որոնք օժտված են **բայի** քերականական կարգերով ու հատկանիշներով: **Բայական տերմիններն** իմաստաբանորեն բնորոշվում են գործողության ընթացքի հայեցակարգի արտահայտմամբ:

To conduct բայը՝ որպես բառային միավոր, ունի *ղեկավարել, կառավարել, առաջնորդել, ուղեկցել* իմաստները: Ներքոբերյալ օրինակում վերջինս կիրառվում է որպես տերմին և արտահայտում *հաղորդել* իմաստը, այն է՝ հաղորդել էլեկտրական հոսանքը հաղորդիչ նյութի միջոցով:

Conductance describes the extent of an object's ability to conduct electricity under

²⁰ Hill S. Are cookies crumbling our privacy? We asked an expert to find out. March 29, 2015, URL.:<https://www.digitaltrends.com/computing/history-of-cookies-and-effect-on-privacy/> (accessed 27.06.2020)

²¹ <https://www.unigasket.it/en/spaghetti-tubing-awg/> (accessed 21.11.2021)

*ideal conditions.*²²


Հետևաբար կարող ենք ասել, որ բառային միավորի՝ աղբյուր տիրույթում արտահայտած իմաստից չի բխում թիրախ տիրույթում դրսևորած իմաստը, և այս դեպքում տերմին դարձած միավորը միանգամայն այլ իմաստ է արտահայտում:

Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կան այնպիսի տերմիններ, որոնք ցույց են տալիս առարկայի որակական հատկանիշները, որպիսությունը, երբեմն նաև պատկանելությունը: Այդպիսիք են ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ստեղծված *soft, hard, blind, intelligent* **ածականները**: Այսպես օրինակ՝ *soft* ածականի տերմինային իմաստը բխում է փոխաբերական տեղաշարժի հիմք հանդիսացող *փափուկ* բառային միավորից:

Հիմք ընդունելով մեր կատարած ձևաբանական ուսումնասիրությունն ու վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինների մեծ մասը **գոյականներ** են: Վերջիններիս հաջորդում են **բայերը**: Իսկ **ածականները** համեմատաբար ավելի քիչ են կիրառվում: Այս հարաբերակցությունն ավելի պատկերավոր դարձնելու համար ներկայացնում ենք այն գծապատկերի տեսքով (*գծապատկերն ըստ Հ. Ղաջոյանի*):

Գծապատկեր 1

Տերմինների խոսքիմասային վերլուծության վիճակագրական տվյալներ



Երրորդ ենթագլխում («Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի տերմինների բառակազմական առանձնահատկությունները փոխաբերականացման տեսանկյունից») ուսումնասիրվում են ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ձևավորված

²² <https://www.techtarget.com/searchnetworking/definition/conductance> (accessed 24.12.2021)

տերմինները բառակազմության տեսանկյունից: Վերջիններս կազմվում են **ածանցման և բառաբարդման** միջոցով: Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կիրառվում են **նախածանցում** և **վերջածանցում** երևույթները: Փոխաբերականացման արդյունքում ձևավորված նախածանցավոր կազմությունները սակավաթիվ են: Առավել հաճախ կիրառվում են *de-, re-, dis-* նախածանցներով կազմված տերմինները: Այսպես օրինակ՝ *debug* բայը կազմված է *de-* նախածանցից և *bug* արմատից: Վերջինս արտահայտում է *վրիպում* իմաստը: Գիտնականների մի խումբ հայտնում է աշխարհում առաջին համակարգչային սխալի մասին, այն է՝ Հարվարդի համալսարանում՝ իրենց համակարգչում ի հայտ եկած փայտոջիլը: Նրանք անմիջապես *վրիպագերծում են* մեքենան: Այսպես ձևավորվում է *debug* տերմինը:

Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինները կազմվում են *-er, -ing, -ion* կամ *-tion* վերջածանցների միջոցով: Այսպես օրինակ՝ *hunt* բայը, ստանալով *-er* վերջածանցը, վերածվում է գոյականի (*hunter*): Վերջինս համագործածական լեզվում ունի *որսորդ, որսի շուն* կամ *ձի* իմաստները: Իսկ ռադիոէլեկտրոնիկայի ոլորտում *hunter* տերմինային միավորը կիրառվում է *ազդանշանների որոնող* կամ *փնտրող* իմաստով: Հիշյալ տերմինի փոխաբերական անցումը բխում է *hunt* բայի՝ աղբյուր տիրույթում արտահայտած իմաստից:

Բառաբարդման միջոցով ստեղծվում են բարդ բառեր, որոնք փոխաբերականացման արդյունքում ստանում են տերմինային արժեք: Բառաբարդումը կարող է դրսևորել թե՛ ձևաբանական, թե՛ շարահյուսական միջոցների հատկանիշներ: Բարդ բառերը որոշակիորեն նմանվում են բառակապակցություններին: Վերջիններս կազմվում են բառերի երկու կամ ավելի արմատների միացումով: Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կիրառվում են փոխաբերականացման արդյունքում ստեղծված տերմինների մի քանի կաղապարներ, ինչպես օրինակ՝

Աղյուսակ 1

Noun+Noun (գոյական+գոյական)

Բարդ բառը որպես ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կիրառվող տերմին	Հայերեն համարժեքը
daisy chain	հերթադիր շղթա
fishbowl	անվտանգ տարածք
trackball	գնդաձև մկնիկ

Աղյուսակ 2

Adjective +Noun (ածական+գոյական)

Բարդ բառը որպես ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կիրառվող տերմին	Հայերեն համարժեքը
deadlock	փոխարգելակում
dead key	չաշխատող ստեղն
highlight	գունանշում

Աղյուսակ 3

Noun+Adjective (գոյական+ածական)

Բարդ բառը որպես ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կիրառվող տերմին	Հայերեն համարժեքը
memory-resident	հիշողության մեջ նստած
fault-tolerant	անսարքության նկատմամբ տոկուն

Աղյուսակ 4

Verb +Noun (բայ+գոյական)

Բարդ բառը որպես ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կիրառվող տերմին	Հայերեն համարժեքը
erase character	ջնջման գրանշան
erase head	ջնջող գլխիկ
control menu	ղեկավարող ընտրացանկ

Բարդ տերմինները հիմնականում արտահայտված են գոյականով և ածականով: Սա պայմանավորված է գոյականի իմաստային առանձնահատկություններով, այն է՝ գործողության նպատակ, արդյունք և նմանություն ցույց տվող հարաբերություններ:

Ի մի բերելով մեր կատարած վերլուծությունները՝ կարող ենք նշել, որ ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինները կազմվում են ածանցման և

բառաբարդման միջոցներով: Առաջատար դերը պատկանում է ածանցմանը, որին հաջորդում է բառաբարդումը: Ստացված արդյունքները ներկայացնում ենք գծապատկերի տեսքով (*գծապատկերն ըստ Հ. Ղաջոյանի*):

Գծապատկեր 2

Տերմինների բառակազմական վերլուծության վիճակագրական տվյալներ



Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Տեխնիկական տերմինները կազմվում են բառերի նշանակությունների փոփոխության հիմքի վրա: Համագործածական բառը, ստանալով տերմինային արժեք, կիրառվում է համապատասխան տերմինաբանական համակարգում: Այսպիսով, կարող ենք փաստել, որ տերմինի նշանակության փոփոխությունը տեղի է ունենում մեկ տերմինաբանակարգի սահմաններում:

2. Գիտության, տեխնիկայի, արտադրության, հասարակական կյանքի զարգացման հետևանքով ստեղծվում են նոր հասկացություններ արդեն իսկ լեզվում գոյություն ունեցող բառերի վերախմաստավորմամբ: Այլ կերպ ասած՝ լեզվի համագործածական շերտի բառերը, ենթարկվելով իմաստային որոշակի փոփոխությունների (փոխաբերականացվելով), ներթափանցում են մասնավոր տերմինաբանական ոլորտ և դառնում տվյալ ոլորտի լիիրավ անդամ:

3. Փոխաբերականացման արդյունքում ստեղծված տերմինները ձևավորվում են առարկաների, երևույթների, հատկանիշների, իրողությունների միջև առկա որևէ ներքին կամ արտաքին նմանության հիման վրա: Փոխաբերականացման արդյունքում տերմին դարձած միավորները սույն աշխատանքում ուսումնասիրվել են **իմաստաբանական, խոսքիմասային և բառակազմական** մակարդակներում:

4. **Իմաստաբանական** մակարդակում կատարած վերլուծությունների արդյունքում կարող ենք նշել հետևյալ եզրահանգումները.

- Քանի որ լեզուն ազդում է մարդկային գործունեության տարբեր ոլորտների վրա, ուստի փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինները

կարող ենք դասակարգել **մարդաբանական (անտրոպոլոգիական)** և **ոչ մարդաբանական (ոչ անտրոպոլոգիական)** խմբերի:

- Փոխաբերականացման արդյունքում մարմնի մասերի անվանումները, մասնագիտություն, ազգակցական հարաբերակցություն ցույց տվող բառերը կիրառվում են ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում:

- Կենդանիների, կենցաղային իրերի, հագուստի անվանումներն ու վերացական հասկացությունները, կիրառվելով ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում, ստանում են տերմինային արժեք:

5. Ուսումնասիրելով ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ստեղծված տերմիններն ըստ **խոսքիմասային պատկանելության՝** կարող ենք փաստել, որ

- ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինների գերակշիռ մասը կազմում են գոյականները (50%): Այս ոլորտներում գործածելի են նաև բայերն (35%) ու ածականները (15%),

- փոխաբերականացման արդյունքում ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում մակբայներ, դերանուններ, թվականներ, եղանակավորող բառեր, ձայնարկություններ ու շաղկապներ չեն կիրառվում:

6. **Բառակազմական** մակարդակում կատարած վերլուծությունների հիման վրա կարող ենք նշել հետևյալը.

- Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում տերմին դարձած միավորների մեծ մասը կազմվում են ածանցման (նախածանցում և վերջածանցում) միջոցով (70%):

- Բառաբարդումը (30%) նույնպես կիրառվում է ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում կազմված տերմինների ստեղծման գործընթացում:

- Մյուս բառակազմական միջոցները, ինչպիսիք են հապավումը, կրճատումը, երկու կամ ավել բառերի միավորմամբ նոր բառերի ստեղծումը, չեն մասնակցում ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ստեղծված տերմիններ կազմելու գործընթացին:

7. Ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի տերմինաբանությունը գտնվում է շարունակական և գերաբազ ձևավորման փուլում: Այս ոլորտներում նոր տեխնոլոգիաների կիրառություններին զուգահեռ իրականացվում են վերջիններիս՝ իրենց համապատասխան անվանումներով կոչելու գործընթացներ: Ստեղծված նորաբանությունները ձեռք են բերում տերմինային արժեք և կիրառություն գտնում տվյալ ոլորտներում: Այստեղից էլ հետևում է, որ փոխաբերականացումը կարևոր դեր ունի ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական

տեխնիկայի ոլորտների տերմինաբանական բառապաշարի համալրման և հարստացման գործում:

Այսպիսով, լեզուն ներթափանցում է գիտության մեջ տերմինների միջոցով, որոնք ապահովում են գիտության և տեխնիկայի, հասարակական կյանքի զարգացումն ու կատարելագործումը՝ դրանով իսկ նպաստելով հասարակության առաջընթացին: Հիրավի, տերմինաբանությունը դառնում է գիտության, տեխնիկայի, ինչպես նաև լեզուների զարգացման ցուցիչն ու պատմությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրատարակումներում՝

1. Specific Features of Word Formation in Computer Terms // *Աստղիկ 24 (Գիրք թարգմանչաց)*, Եր., «Սահակ Պարթև» հրատ., 2013-2014 թթ., էջ 243-248 (համահեղինակ՝ Ա.Կնյազյան):

2. Abbreviations as Word-Forming Means in Computer Terms // *Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում*: Գիտ. հոդվածների ժող. N 5, Եր., «Լուսակն», 2013 թ., էջ 64-67:

3. Affixation in Computer Terms // *Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում*: Գիտ. հոդվածների ժող. N 6, Եր., «Լուսակն», 2015 թ., էջ 58-64:

4. The Role of Metaphor in Technical Term-Formation // *Armenian Folia Anglistika*, International Journal of English Studies 1(15), Yerevan State University, Yerevan, 2016, pp. 27-38.

5. Եզրույթի և բառի գիտական սահմանումն ու դրանց առանձնահատկությունները // *Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում*: Գիտ. հանդես, Եր., «Լուսակն», 2018 թ., էջ 54-62:

6. Փոխաբերությունը փոխաբերականացման արտահայտման միջոց // Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ, *Հանդես*: Գիտամեթոդական հոդվածների ժողովածու N 20, Եր., «Միամ» ՍՊԸ, 2018 թ., էջ 222-230:

7. Փոխաբերականացումը հաշվողական տեխնիկայի եզրույթների ստեղծման հիմք // *Գիտական տեղեկագիր*, պրակ 1, Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, 2020 թ., էջ 99-107:

8. Տեխնիկական եզրույթների ուսումնասիրման պատմական և ստուգաբանական ակնարկ // *Գիտական տեղեկագիր*, պրակ 2, Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, 2021թ., էջ 100-107:

Оснoвы мeтaфoризaции в тeхничeскoм aнглийскoм (нa мaтeриaлe тeрминoв
рaдиoэлектрoники и вычислитeльнoй тeхники)

Резюме

Дaннaя диссертaциoннaя рaбoтa пoсвящeнa исслeдoвaнию тeрминoв рaдиoэлектрoники и вычислитeльнoй тeхники, сoздaннoх в рeзультaтe мeтaфoризaции.

Цeль нaстoящeгo исслeдoвaния сoстoит в изучeнии мeтaфoризaции кaк oснoвы фoрмирoвaния тeхничeских тeрминoв. Длa дoстижeния этoй цeли в рaбoтe пoстaвлeны слeдующиe **зaдaчи**:

1. исслeдoвaть сeмaнтичeские oсoбeннoсти тeхничeских тeрминoв нa oснoвe лингвистичeских примeрoв;
2. прoвeсти сeмaнтичeский, слoвooбрaзoвaтeльный и чaстирeчeвoй aнaлиз тeрминoв рaдиoэлектрoники и вычислитeльнoй тeхники, oбрaзoвaннoх с пoмoщью мeтaфoризaции;
3. стaтистичeским мeтoдoм выявить прoцeнтнoe сooтнoшeниe клaссификaции чaстeй рeчи и слoвooбрaзoвaтeльных срeдств тeрминoв рaдиoэлектрoники и вычислитeльнoй тeхники, oбрaзoвaннoх путeм мeтaфoризaции;
4. выявить рoль тeрминoв рaдиoэлектрoники и вычислитeльнoй тeхники, сoздaннoх в рeзультaтe мeтaфoризaции.

Актуaльнoсть дaннoй диссертaциoннoй рaбoты oбуслoвлeнa рeшaющeй и вaжнoй рoлeй тeрминoв рaдиoэлектрoники и вычислитeльнoй тeхники в нaшeй oбщeствeннoй жизни. Цифрoвизaция прaктичeски вceх сфeр нaуки, тeхники, прoмышлeннoсти и стрeмитeльнoe прoникнoвeниe сoврeмeннoх тeхнoлoгий в нaшу пoвceднeвнyю жизнь пoзвoляют гoвoрить o рaсширeнии тeрминoв рaдиoэлектрoники и вычислитeльнoй тeхники. Сoздaниe нoвoх нaучнoх пoнятиe будeт сoпoсoбствoвaть oбoгaщeнию тeхничeскoгo слoвaрнoгo зaпaсa aнглийскoгo языкa.

Нaучнaя нoвизнa нaстoящeй рaбoты oснoвaнa нa изучeнии тeрминoв рaдиoэлектрoники и вычислитeльнoй тeхники, кoтoрыe выявили прoдуктивнoсть мeтaфoризaции в прoцeссe тeрминooбрaзoвaния. Нoвoм тaкжe являeтся рaссмoтрeниe чaстeй рeчи и слoвooбрaзoвaтeльных срeдств длa oбрaзoвaния тeрминoв рaдиoэлектрoники и вычислитeльнoй тeхники с пoмoщью мeтaфoризaции. Крoмe тoгo, прeдстaвлeны прoцeнтнe сooтнoшeния тeрминoв рaдиoэлектрoники и вычислитeльнoй тeхники, сoздaннe путeм мeтaфoризaции, с испoльзoвaниeм мeтoдa стaтистичeскoй oбрaбoтки.

Методологическая база исследования обусловлена поставленными целями и задачами. Описательный, сравнительно-аналитический и статистический методы используются для представления результатов в диссертации.

Предметом исследования являются технические термины (радиоэлектроники и вычислительной техники), созданные в результате метафоризации. В работе было проанализировано около 2000 технических терминов.

В **теоретическом плане** данное диссертационное исследование вносит определенный вклад в углублении изучения терминологии и метафоризации.

Практическая значимость исследования заключается в том, что результаты данной диссертационной работы представляют интерес для семантики, лексикографии, прагматики и преподавания технического английского языка.

Цель и задачи определяют структуру работы, которая состоит из введения, трех глав, заключения и списка литературы.

В первой главе рассматриваются теоретические основы терминов и терминологических единиц, определяются понятия *термин* и *слово*, описывается процесс возникновения и развития технических терминов.

Во второй главе рассматриваются теоретические основы метафоризации, выдвинутые в языкознании, и изучаются семантические особенности технических терминов.

В третьей главе исследуются термины радиоэлектроники и вычислительной техники, образованные посредством метафоризации. Также проводится подробный семантический, словообразовательный и частиречевой анализ терминов радиоэлектроники и вычислительной техники с использованием статистического метода.

Таким образом, основные выводы нашего исследования позволят выявить продуктивность метафоризации в процессе образования терминов радиоэлектроники и вычислительной техники. Наше исследование может способствовать пониманию и развитию информационных технологий.

Hasmik Spartak Ghajoyan

Bases of Metaphorization in Technical English
(with special reference to radioelectronic and computational terms)

Summary

Terms and terminological combinations have a special place in the word stock of any language. The **focus of the dissertation** is radioelectronic and computational terms in English.

The **aim** of the present research is to investigate the bases of metaphorization of technical terms (with special reference to radioelectronic and computational terms). To achieve this goal the following **objectives** are put forward:

1. to investigate the semantic features of technical terms on the basis of linguistic samples;
2. to conduct semantic, word-formation and part of speech analysis of radioelectronic and computational terms formed with the help of metaphorization;
3. to define the percentage relation of classification of the parts of speech and word-formation means of radioelectronic and computational terms formed by means of metaphorization, using the statistical method;
4. to identify the role of radioelectronic and computational terms that are formed on the basis of metaphorization.

The **topicality of the present research** is accounted for by the decisive and important role radioelectronic and computational terms play in our social life. Digitalization of almost all spheres of science, technology, industry and rapid penetration of modern technologies into our everyday life allow us to talk about the expansion of the radioelectronic and computational terms. Creation of new scientific concepts will contribute to enrichment of English technical word stock.

The **scientific novelty** of the present work is based on our observations in radioelectronic and computational terms which have revealed the productivity of metaphorization in the process of term formation. The novelty of the research is also provided by the fact that identification of classification of parts of speech and word-formation means are implemented for forming radioelectronic and computational terms with the help of metaphorization. Besides, percentage relations of radioelectronic and computational terms created by means of metaphorization are presented, using the method of statistical processing.

The **methodological framework** is based on the purpose and objectives put forward in the research. Descriptive, comparative-analysis **methods** with their main components

(observation, generalization, interpretation, classification) are mainly used to present the results in the dissertation. The **method** of statistical processing is also used.

Data for study is radioelectronic and computational terms. For the purpose of this study approximately 2000 technical terms have been analysed.

The **theoretical significance** of this research is illustrated by the fact that it emphasizes the importance of investigation in the scope of terminology and metaphORIZATION.

The **practical value** of the present research lies in the fact that the results are of great interest to semantics, lexicography, pragmatics and teaching technical English.

The purpose and objectives determine the structure of the work which consists of an introduction, three chapters, conclusion and bibliography.

Chapter One provides an overview of theoretical bases of terms and terminological units, identifies the concepts *term* and *word* and describes the process of development of technical terms.

Chapter Two examines the theoretical bases of metaphORIZATION put forward in linguistics and studies semantic features of technical terms.

Chapter Three investigates radioelectronic and computational terms formed by means of metaphORIZATION. It covers a detailed semantic, word-formation and parts of speech analysis of radioelectronic and computational terms, using statistical method.

Thus, the main findings of our study reveal the productivity of metaphORIZATION in the process of radioelectronic and computational term formation. It will contribute to the development of IT technology and the progress of society.

